

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 37/11

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ Ելենա Խաչատրյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ելենա Խաչատրյանը հայտնում է, որ որպես ֆիզիկական անձ (ՀՎՀՀ 63640271) պարտք ունենալով պետական բյուջեի նկատմամբ, դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ խնդրելով ՀՀ հարկային օրենսգրքի 79 գլխի համաձայն կնքել հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց:

2018թ. փետրվարի 5-ին Ելենա Խաչատրյանը վճարել է պարտավորության 20%-ից ավելի գումար՝ 700,0 հազար դրամ, պետբյուջեի 900008000490 հաշվին, իսկ 2018թ. մարտի 6-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից հաստատվել է հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցը:

Սակայն 03.05.2018թ. Ելենա Խաչատրյանը տեղեկացել է, որ այդ գումարը չի մուտքագրվել համապատասխան հաշվին: Ելենա Խաչատրյանը դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալին, որից հետո միայն 07.05.2018թ. այդ գումարը մուտքագրվել է հարկային տեսչության հաշվին:

Ելենա Խաչատրյանը վերը նշված գումարը պետբյուջեի 900008000490 հաշվին վճարել է 05.02.2018թ., սակայն այն մուտքագրվել է հարկային տեսչությունում 07.05.2018թ., ինչի արդյունքում առաջացել են երեք ամսվա տույժեր:

Ելենա Խաչատրյանը գտնում է, որ իր կողմից 05.02.2018թ. բարեխիղճ կերպով կատարվել է անհրաժեշտ գումարի մուծումը պետական բյուջեի համապատասխան հաշվին: Իսկ այն փաստը, որ այդ գումարը նստել է հարկային տեսչության հաշվին միայն 07.05.2018թ., այն էլ իր անմիջական միջամտությունից հետո, իր հետ ոչ մի առնչություն չունի: Ելենա Խաչատրյանը գտնում է, որ տեղի ունեցածի համար պատասխանատվություն չի կրում, հետևաբար, իր նկատմամբ կիրառված տույժերն անհիմն են:

Ելենա Խաչատրյանը գտնում է, որ գումարի փոխանցման ճանապարհին ինչ-որ տեղ թյուրիմացությամբ սխալ է տեղի ունեցել, որի հետևանքով գումարը ժամանակին չի մուտքագրվել հարկային տեսչության հաշվին: Նշվածի հետ Ելենա Խաչատրյանը ոչ մի առնչություն չունի և ինչ-որ օղակում տեղ գտած սխալի պատճառով պարտավոր չէ տույժեր վճարել:

Բոլոր դեպքերում գլխավորն այն է, որ 05.02.2018թ. վճարած գումարը մուտքա-

գրվել է պետբյուջե, իսկ այդ գումարի հետագա շարժի հետ Ելենա Խաչատրյանն առնչություն չունի:

Ելնելով վերը նշվածից, Ելենա Խաչատրյանը խնդրում է չեղարկել 05.02.2018թ. մինչև 07.05.2018թ. 700,0 հազար դրամը հարկային տեսչություն մուտքագրելու ուշացման պատճառով առաջացած տույժերը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ելենա Խաչատրյանի չկատարված հարկային պարտավորությունը 11.11.2017թ. դրությամբ կազմել է 2.702.033 դրամ:

05.02.2018թ. Ելենա Խաչատրյանի կողմից վճարվել է պարտավորության 20%-ից ավելի գումար՝ 700.000 դրամ, պետբյուջեի 900008000490 հաշվին: Այնուհետև, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 79-րդ գլխով նախատեսված դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և Ելենա Խաչատրյանի միջև 06.03.2018թ. կնքվել է հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:

Չնայած նրան, որ Հարկային պարտավորության 20%-ից ավելի գումարը՝ ց, Ելենա Խաչատրյանի կողմից պետբյուջեի համապատասխան հաշվեհամարին է վճարվել 05.02.2018թ., սակայն, քանի որ այն փաստացի մուտքագրվել է միայն 07.05.2018թ., ուստի 05.02.2018-07.05.2018թթ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել են տույժեր:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված գույքի արգելանքի դեպքում առկա հարկային պարտավորության ոչ պակաս, քան 20 տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի հարկ վճարողի դիմումի համաձայն, փոխարինելու հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև 9 ամիս ժամկետով:

ՀՀ հարկային օրենսգրքի 437-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավի պայմանագիր կնքելու դեպքում հարկային պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև ինն ամիս ժամկետով: Որպես գրավատու կարող է հանդես գալ ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը: Որպես գրավատու երրորդ անձի հանդես գալու դեպքում գրավի պայմանագրին կցվում է նաև պարտապան հարկ վճարողի գրավոր համաձայնությունը՝ գրավի պայմանագրին կից կազմված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցի համաձայն, հարկային պարտավորությունները կատարելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում Ելենա Խաչատրյանը ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով 05.02.2018թ. վճարել է առկա հարկային պարտավորության 20 տոկոսը գերազանցող գումարը, ինչի արդյունքում նրա հետ կնքվել է հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց: Այսինքն, հարկային մարմինը մարված է համարել առկա հարկային պարտավորության ոչ պակաս, քան 20 տոկոսը, որը տվյալ դեպքում կազմել է 700.000 դրամ:

Հակառակ դեպքում Ելենա Խաչատրյանի հետ հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց չէր կնքվի:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ 05.02.2018-07.05.2018թթ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված տույժի գումարները ենթակա են վերանայման (նվազեցման):

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ Ելենա Խաչատրյանի դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ